ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՅԳԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ԺՊԻՏ>> ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ

ՀՀ Արարատի մարզ Վեդի համայնք բն.Այգավան
Գ.Ղուկասյան 3
Հեռ. 094172258
JPIThoak.mankapartez@bk.ru
21.12.2024թ

ՈՐՈՇՈՒՄ

«Աննա Օհանջանյան» ԱՁ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի «Այգավանի ժպիտ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի 2025 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված՝ «ԱՄ-ԳՀԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել «**Աննա Օհանջանյան**» ԱՁ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում Մասնակցի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի՝ Մասնակցին տրվել է հնարավորություն՝ շտկելու անհամապատասխանությունը: Վերջինս չի օգտվել իրեն տրված շտկման հնարավորությունից և Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, հետևաբար Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Վերոգրյալ չափաբաժինների մասով Ընթացակարգը չկայացած է հայտարարվել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) և 2024 թվականի դեկտեմբերի

11-ին տեղեկագրում հրապարակվել է Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Այգավանի ժպիտ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի 2024 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունել է որոշում «Աննա Օհանջանյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 19 ենթակետը և հիմք ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները. այն է՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Աննա Օհանջանյան» ԱՁ	47801653	**ք. Արարատ Սպանդարյան 9**	V			21.12.2024թ. N «ԱՄ-ԳՀԱՊՁԲ-25/01»

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

Որոշում եմ.

1. «Աննա Օհանջանյան» ԱՁ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու /2/ տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները սույն որոշման կայացման հաջորդող օրը ներկայացնել լիազոր պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Այգավանի ժպիտ ՆՈՒՀ» ՀՈԱԿ տնօրեն Լ.Թունյան